ԱՑԼ. ԵՒ ԱՑԼ.Ք.

Խմբագրութեանս հասած տեղեկութեանց նայելով, Բեսարաբիոյ և Նոր Նախիջևանի թեմի մէջ կան 39 եկեղեցիք, որոնցից 2-ը աղօթատուն իսկ 3 ը վանքեր, 58 սրբազնագործ և 27 ստորին եկեղեցական պաշտօնեայք։ Թեմի մէջ կան 19 ծխական Հոգևոր դպրոցներ մի հատ արհեստական դպրոց և մի հատ թեմական Դպրանոց։ այդ դպրոցների մէջ սովորում են 1226 տղայ և աղջիկ աշակերտներ։ և դասախօսումեն 74 ուսուցիչներ։ Թեմի մէջ կան 28005 հայ։ որոնցից 14533 արական և 13472 իգական։

Շամախուոյ թեմի մէջ կան 8 հատ տղայոց հոգ։ դպրոց 417 և 2 աղջկանց դպրոց 129 աշակերտներով 26 ուսուցիչներով։

—

Արգեազու Ս. Խաչվանքի վանահայր Արժ. Յովհաննէս վարդապետ Փեշտմալճեան գրումէ։—։ Դարալագեազ գաւառի Քէշիշքեանդ գիւղի ծխական Գրիգոր քահանայ Տէր Կարապետեան ի յիշատակ իւր և հանգուցեալ ծնողացն՝ Արգեազու Ս. Խաչվանքին ընծայեց մի հատ չորս փթանոց զանգակ իւր շղթայով, որի գինն է 106 ռուբլի ։։

Աստուած ի հաճոյս իւր ընդունի յիշեալ քահանայի նուէրքը և լուսաւորէ նորա ծնողաց հոգիքը։

—

Գէորգևսկեցի Թամբեան եղբարք խոստացած լինելով իւրաքանչիւր տարի մի ձիու գին ուղարկել յօգուտ Մայր Աթոռոյս, կատարեցին իւրանց խոստումը 1881 և 1882 թուականների համար ուղարկելով 120 ռուբլի։ Սինօդը ստանալով յիշեալ դրամը գործակալ Արժ Սարգիս ա. քահանայ տէր Պօղոսեանցի միջոցաւ՝ ուղարկեց օրհնութեան թուղթ հասցնելու նուիրատու պարոնայց — եղբարց Գրիգորի և Խաչատրոյ Թամբեանց։

Գործակալ Հայրը Սինօդին ուղղած իւր գրութեամբ խոստանումէ նոյնպիսի նուէր այս տարուայ համար ստանալ նաև մի քահանայից, իսկ Պ. Անտոն մելքոնեան Թամբեանցից՝ 1882 և 1883 թուականների համար ստանալ և ուղարկել Սինօդին և այսպէս շարունակել ապագայում։

Աստուած ի հաճոյս իւր ընդունի յիշեալ նուիրատուութիւնն և վարձահատոյց լինի նուիրատուներին ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ։